

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N°1

«23» փետրվարի 2026թ. N° ՇՄՆ-COP17-26/01 պայմանագրի

ք.Երևան

«04» «06» 2026թ.

Շրջակա միջավայրի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի պ/կ Արկադի Խաչատրյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, և «Դոպինգ Սփեյս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հայկ Սիմոնյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կատարող», մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետ՝ «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով կողմերի միջև 2026 թվականի փետրվարի 23-ին կնքված «N° ՇՄՆ-COP17-26/01» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.2, 2.4.1, 2.2.4 և 7.5 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

- 1.1. Կողմերը որոշեցին 2026 թվականի փետրվարի 23-ին կնքված «N° ՇՄՆ-COP17-26/01» ծածկագրով պայմանագիրը լրացնել՝
 - 1.1.1. վճարման ժամանակացույց հավելվածով՝ համաձայն Հավելված N°1-ի,
 - 1.1.2. «COP17 համաժողովի անցկացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների պատրաստվածության ապահովում» ծառայությունների մատուցման (ձեռքբերման) փուլային նկարագրով (տեխնիկական բնութագիր)՝ համաձայն Հավելված N°2-ի,
 - 1.1.3. «COP17 համաժողովի անցկացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների պատրաստվածության ապահովում» ծառայությունների մատուցման (ձեռքբերման) նախահաշիվը՝ համաձայն Հավելված N°3-ի:
- 1.2. Կողմերը որոշեցին 2026 թվականի փետրվարի 23-ին կնքված «N° ՇՄՆ-COP17-26/01» ծածկագրով պայմանագրում Պատվիրատուի «900011023281» հաշվեհամարը փոփոխել «900011066439» հաշվեհամարով:

2. Այլ պայմաններ

- 2.1. Համաձայնագրի պայմանները կիրառվում են մինչև համաձայնագիրն ուժի մեջ մտնելը կողմերի միջև 2026 թվականի փետրվարի 23-ից փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:
- 2.2. Կատարողը պարտավոր է Համաձայնագրի կատարման նպատակով կնքված պայմանագրերի կամ համաձայնագրերի կամ հաշիվ-ապրանքագրերի կամ երրորդ անձանց կողմից ներկայացված, Համաձայնագրով նախատեսված ծառայությունների կամ աշխատանքների գնագոյացմանը վերաբերող այլ փաստաթղթերի պատճեն, դրանք կնքելուց կամ հաստատելուց կամ ստանալուց հետո 25 (քսանհինգ) աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Պատվիրատուին:
- 2.3. Պատվիրատուին տրամադրել Պայմանագրի 2.3.2 կետով նախատեսված «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի քարտուղարության ներկայացուցչի համաձայնությունը (այդ թվում՝ էլեկտրոնային փոստով ստանալու դեպքում)՝ Ծառայության մատուցման փուլային նկարագրի ու հանձնման-ընդունման արձանագրության վերաբերյալ:
- 2.4. Եթե Կատարողը Համաձայնագրի կատարման նպատակով պարտավորություններ է ստանձնել երրորդ անձանց առջև, սակայն Պատվիրատուի գործողությունների կամ անգործության հետևանքով կամ Պատվիրատուի կողմից Պայմանագիրը կամ Համաձայնագիրը դադարեցնելու կամ չեղարկելու հետևանքով երրորդ անձանց առջև առաջանում են նրանց հետ կնքված պայմանագրերով նախատեսված պարտավորություններ, ապա Պատվիրատուի կողմից այդ պարտավորություններն ամբողջ ծավալով ենթակա են հատուցման՝ Կատարողի կողմից հիմնավորող փաստաթղթեր ներկայացնելու, ինչպես նաև ստանձնած պարտավորությունների շրջանակում սեփականության իրավունքով ձեռք բերված բոլոր նյութական արժեքները (առկայության դեպքում) և արդյունքային ցուցանիշները Պատվիրատուին հանձնելու դեպքում:
- 2.5. Եթե Կատարողը Համաձայնագրի կատարման ընթացքում հրաժարվում է այն կատարելուց, ապա Կատարողը պարտավոր է վճարել Պատվիրատուին Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև հատուցել Համաձայնագրի 1.1.4 կետով սահմանված գնման առարկան այլ անձանցից ձեռքբերման դեպքում գների դրական տարբերությունը: Սույն կետով նախատեսված դեպքերում Կողմերը կազմում են փոխադարձ հաշվարկների ակտ, որով:

- ա) Կատարողի կողմից Պատվիրատուին է հանձնվում, իսկ Պատվիրատուն ընդունում է մինչև հրաժարման կամ լուծման պահը Համաձայնագրի արդյունքները,
 - բ) Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին վերադարձնել Համաձայնագրի շրջանակում կատարված բոլոր վճարումները, եթե դրանք չեն ծածկում փոխադարձ հաշվարկների ակտով կատարված ծախսերը:
- 2.6. Կողմերը համաձայնում են, որ Պայմանագրի 4.2 կետով նախատեսված կանխավճարը Պատվիրատուն Կատարողին վճարում է 2 (երկու) փուլով՝
- ա) 1-ին փուլ՝ Համաձայնագրի կնքումից հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին Համաձայնագրի գնի 40 (քառասուն) տոկոսը՝ 873 119 100 (ութե հարյուր յոթանասուներեք միլիոն հարյուր տասնինը հազար հարյուր) դրամը,
 - բ) 2-րդ փուլ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից Համաձայնագրի ֆինանսավորման համար համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին Համաձայնագրի գնի 50 (հիսուն) տոկոսը՝ 1 091 398 875 (մեկ միլիարդ իննսունմեկ միլիոն երեք հարյուր իննսունուրեք հազար ութ հարյուր յոթանասունհինգ) դրամը,
- 2.7. Կանխավճարը մարվում է մինչև Համաձայնագրով նախատեսված ծառայությունների ավարտը՝ Պայմանագրի 4.2 կետով նախատեսված կարգով՝ հանձնման-ընդունման գործընթացի կազմակերպմամբ:
- 2.8. Համաձայնագրի Հավելված №3-ի «Չնախատեսված ծախսեր» տողով նախատեսված միջոցները կարող են օգտագործվել միայն փաստացի առաջացած ծախսերի ֆինանսավորման նպատակով: Ընդ որում, այդ ծախսերի իրականացման համար Պատվիրատուի նախնական համաձայնեցումը պարտադիր է: Նշված գումարի չօգտագործված մասը ենթակա է վերադարձման Պատվիրատուին: Պատվիրատուն սույն կետով նախատեսված համաձայնությունը կամ մերժումը հայտնում է Կատարողին 1 (մեկ) օրվա ընթացքում:
- 2.9. Համաձայնագիրը կազմված է 2 (երկու) էջից, կնքվում է երկու օրինակից, հայերեն լեզվով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի Հավելվածը համարվում է համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ԿԱՏԱՐՈՂ

Շրջակա միջավայրի նախարարություն

ք.Երևան, Կառավարական տուն 3

ՖՆ գործառնական վարչություն

ՀՀ 900011066439

ՀՎՀՀ 02507198

Շրջակա միջավայրի նախարարության

գլխավոր քարտուղարի պ/կ

Ա.Խաչատրյան

(ստորագրություն)

Կ.Տ.



«Դոպինգ Սփեյս» ՍՊԸ

ք.Երևան, Նալբանդյան 25 ա, բն. 58

«Էվոկաբանկ» ՓԲԸ

ՀՀ 1660030207649200

ՀՎՀՀ 02893152

«Դոպինգ Սփեյս» ՍՊԸ-ի

տնօրեն

Հ.Սիմոնյան

(ստորագրություն)

Կ.Տ.



(Handwritten signatures)

Հավելված N°1
 « 04 » « 06 » 2026թ. կնքված
 համաձայնագիր N°1 -
 « 23 » « փետրվարի » 2026թ. կնքված
 «N° ՇՄՆ-COP17-26/01» պայմանագրի

ՊԱՏԿԻՐԱՏՈՒ

Շրջակա միջավայրի նախարարության
 թվային բարեփոխության պ/կ



ԿԱՏՐՈՒ

«Դուպլինգ Ափեյս» ՍՊԸ-ի
 տնօրեն



ԿԶԱՐՄԱՆ ՓԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

(ՀՀ դրամ)

h/h	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ճառայության անվանումը	Պինաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026 թվականին՝										
			այդ թվում (ըստ ամիսների աճողական կարգով)										
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	Ընդամենը
1	79951112	«COP17 համաժողովի անցկացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների պատրաստվածության ապահովում» ծառայությունների մատուցման (ձեռքբերման) նախագիծ	-	-	-	-	-	-	1 870 969 500	1 870 969 500	1 870 969 500	1 870 969 500	2 182 797 750

Հավելված №2
« 04 » « 06 » 2026թ. կնքված
համաձայնագիր №1
« 23 » « փետրվարի » 2026թ. կնքված
«№ ՇՄՆ-COP17-26/01» պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղարի պ/կ
Ա. Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Դոպինգ Սփեյս» ՍՊԸ-ի
տնօրեն
Հ. Սիմոնյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՄԱՏՈՒՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՓՈՒԼԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ
«Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի քարտուղարության
ներկայացուցչի ներկայացրած չափանիշների՝ COP17 համաժողովի անցկացման
համար անհրաժեշտ ենթակառուցվածքների պատրաստվածության ապահովում

Մատուցման ենթակա ծառայության սույն նկարագիրը մշակվել է Շրջակա միջավայրի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և «Դոպինգ Սփեյս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2026 թվականի փետրվարի 23-ին կնքված «ՇՄՆ-COP17-26/01» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 2.4.1. կետի և Հավելված 1.1-ի 2-րդ կետի 11-րդ պարբերության կատարումն ապահովելու նպատակով:

Ամփոփագիր

2026 թվականին Հայաստանը կհյուրընկալի ՄԱԿ-ի «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողովը (CBD COP17)՝ միջազգային բարձր մակարդակի միջոցառում, որը կհամախմբի պետությունների, միջազգային կազմակերպությունների, գիտական համայնքի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին: Այս իրադարձությունը Հայաստանի համար կարևոր հնարավորություն է՝ ներկայանալու որպես զլոբալ բնապահպանական օրակարգի պատասխանատու և ակտիվ դերակատար:

Նպատակ

Ծրագրի հիմնական նպատակն է առաջին անգամ Հայաստանում ս.թ. Հոկտեմբերի 18-ից 30-ը կազմակերպել COP17 Convention on Biological Diversity կոնֆերանսը, որը միտված է տարածաշրջանում կենսաբազմազանության պահպանմանը, ռեսուրսների բաշխմանը և արդյունավետ օգտագործմանը: Միջոցառումը պատշաճ կերպով անցկացնելու նպատակով նախատեսվում է կառուցել ժամանակավոր ենթակառուցվածքներ:

Նախագիծը նախատեսում է 4 տեխնիկապես հագեցած վրանային համալիրների տեղադրում, որոնց միջոցով կստեղծվեն անհրաժեշտ պայմաններ անցկացնելու միջազգային ստանդարտներին համապատասխան միջոցառում: Վրանային համալիրները ապահովելու են լիազումար (պլենար) նիստերի արդյունավետ և անխափան անցկացումը, կազմակերպվելու է այցելուների և մասնակիցների կենտրոնացված գրանցման գործընթացը, կառուցվելու է վերահսկվող մուտքի և ելքի հիմնական գոտի, ապահովվելու է ընդհանուր անվտանգության կազմակերպման համար նախատեսված հատուկ տարածք, որտեղ կիրականացվի մասնակիցների հոսքերի կառավարումը, անվտանգ և ապահով ելումուտը: Այսպիսով, նախագիծը միտված է ապահովելու միջոցառման կազմակերպված, անվտանգ և միջազգային չափանիշներին համապատասխան իրականացումը:

Ծրագրի ժամկետներ

Ծրագրի իրականացումը նախատեսվում է փուլային մոտեցմամբ՝ ապահովելով աշխատանքների հաջորդական և համակարգված կազմակերպում: Նախապատրաստական փուլը մեկնարկել է 2025 թվականի հոկտեմբերից, որի ընթացքում իրականացվել են նախնական կազմակերպչական և տեխնիկական աշխատանքները: Նախագծման փուլը սկսվել է 2026 թվականի հունվարից՝ ներառելով նախագծային լուծումների մշակումը, տեխնիկական փաստաթղթերի պատրաստումը և համապատասխան համաձայնեցումները: Բեռնափոխադրման փուլը նախատեսվում է 2026 թվականի հուլիսից օգոստոս ընկած ժամանակահատվածում, որի ընթացքում կիրականացվի անհրաժեշտ նյութերի և սարքավորումների տեղափոխումը Մերիդիան էքսպո կենտրոն: Իրականացման (շինարարական և տեղադրման) փուլը նախատեսվում է 2026 թվականի օգոստոսին, որի ընթացքում կիրականացվեն վրանային համալիրների տեղադրումը և ենթակառուցվածքների ձևավորումը: Ծրագրի իրականացման փուլը ներառում է նաև ներքին և արտաքին հարդարման աշխատանքները և կահավորումը:

Ծրագրի հանձնման փուլը նախատեսված է 2026 թվականի հոկտեմբերի 1-ին, ապահովելով օբյեկտի լիարժեք պատրաստվածությունը շահագործման համար:

Տեղանքի նկարագիր

Ծրագրի իրականացման վայր է ընտրվել Երևան քաղաքի Մերիդիան էքսպո կենտրոնը: Ընտրված տարածքը համապատասխանում է միջազգային չափանիշներին և ունի անհրաժեշտ կարողություններ՝ մեծ թվով այցելուների և մասնակիցների ընդունման համար: Տարածքի մուտքը հարմարեցված է թեթև մարդատար, բեռնատար, ինչպես նաև մեծաթիվ ուղևորափոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների համար: Մուտքն ապահովում է հոսքերի արդյունավետ կազմակերպում և լոգիստիկ գործընթացների անխափան իրականացում: Ժամանակավոր վրանային համալիրները և հարակից ենթակառուցվածքները տեղակայվելու են հիմնականում շենքի ետնամասում՝ ապահովելով ինչպես գործառնական հարմարավետություն, այնպես էլ անվտանգության պահանջներին համապատասխան տարածքային տարանջատում: Ընտրված տարածքը, սույն ծրագիրն իրականացնելու համար, Պատվիրատուն Կատարողին կփոխանցի մինչև սույն թվականի օգոստոսի մեկը՝ ավարտուն վիճակում:

Տեխնիկական բնութագիր

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է տարբեր նշանակության ժամանակավոր 4 վրանային կառույցների տեղադրում, որոնք ամբողջությամբ համապատասխանելու են միջազգային տեխնիկական և անվտանգության չափանիշներին: Բոլոր 4 վրանները լինելու են բարձր տեխնիկական հագեցվածությամբ: Լիագումար նիստերի համար նախատեսվում է երկու խոշորածավալ վրանների տեղադրում՝ համապատասխանաբար՝ 35×65×10մ և 30×70×10մ չափերով:

Վրանները կներառեն՝

- ժամանակակից օդափոխության և ջերմաստիճանի կարգավորման համակարգեր,
- պատվիրատուի պահանջով նախատեսված բարձր արդյունավետության ձայնամեկուսացման համակարգ, որը կապահովի մինչև 40 դեցիբել ձայնային մեկուսացում՝ նույնիսկ անձրևային պայմաններում,
- լիարժեք ներքին և արտաքին լուսավորություն,
- հակահրդեհային համակարգ՝ համապատասխան տվիչներով,
- փայտյա հատակ՝ գորգապատ ծածկով,
- ձայնամեկուսիչ և բրենդավորված պատեր,
- հակահրդեհային հատկություններով տեքստիլ նյութեր,
- մուտքեր, որոնք հարմարեցված են նաև անվասայլակ օգտագործողների համար:

Նախատեսվում է 20×30×4 մ չափերով վրան, որը կօգտագործվի համապատասխան գործառնական նպատակների համար: Այն կունենա՝

- այլումինե կարկաս,
- ջերմամեկուսիչ (տերմո) տանիք,
- փայտյա հատակ,
- ընդհանուր լուսավորության համակարգ,
- օդափոխության համակարգ

Անվտանգության աշխատանքների կազմակերպման նպատակով նախատեսվում է 20×20×4 մ չափերով առանձին վրան, որը նույնպես կունենա՝



- այլումինե կարկաս,
- ջերմամեկուսիչ (տերմո) տանիք,
- փայտյա հատակ,
- ընդհանուր լուսավորություն,
- օդափոխության համակարգ:

Համալիրի ժամանակավոր 4 վրանային կառույցների էլեկտրամատակարարումը նախագծվել է համաձայն՝

1. Պատվիրատուի պահանջների ANNEX A COP 17,
2. Ճարտարապետական և շինարարական գծագրերի,
3. Ինժեներական համակարգերի գծագրերի,
4. Ներկայումս գործող կանոնակարգերը և պահանջների, էլեկտրատեղակայանքների Սարքվածքների Ներառվող «Ընդհանուր պահանջներ» Տեխնիկական Կանոնակարգի, ՀՀՇՆ 22-03-2017 «Արհեստական և Բնական Լուսավորություն», СНИП 31-110-2003, ВСН 59-88 շինարարական նորմերի և այլ կարգավորող փաստաթղթերի:
5. NFPA 110: Արտակարգ և վթարային էլեկտրամատակարարման համակարգերի ստանդարտի (1999թ հրատարակություն) BS 7176

Այս նախագծում իրականացված տեխնիկական լուծումները լիովին համապատասխանում են գործող բնապահպանական, սանիտարահիգիենիկ, հրդեհային անվտանգության, աշխատանքային անվտանգության և այլ համապատասխան չափորոշիչներին ու կանոնակարգերին: Այս միջոցառումները ապահովում են օբյեկտի անվտանգ և հուսալի գործունեությունը, պաշտպանելով մարդկանց կյանքն ու առողջությունը՝ համաձայն աշխատանքային գծագրերում նշված դրույթների: Ընդհանուր առմամբ, Համալիրի ժամանակավոր 4 վրանային կառույցների էլեկտրական սարքավորումները պետք է սնուցվեն նոր արդիականացված 6/04 կՎ 1 x (2 x 2500kVA) տրանսֆորմատորային կայանից (ընդհանուր 3200կՎտ հզորությամբ: Համալիրի ժամանակավոր 4 վրանային կառույցներում նախատեսվում են էլեկտրասնուցման բոլոր երեք կարգերի էլեկտրական սպառիչները: I և II կարգերի էլեկտրասնուցումը պետք է ապահովվել բարձր հոսանքի ավտոմատ կերպափոխիչների միջոցով, որոնք տեղակայված են հիմնական վահանակներում: Գլխավոր սնուցման լարումը 380/220 Վ է, իսկ հաճախականությունը՝ 50 Հց: Էլեկտրասնուցումը իրականացվում է 5 և 3 լարային սխեմայով: Բոլոր էլեկտրական վարդակները պետք է համալրված լինեն 3-րդ կամ 5-րդ հողանցման կոնտակտով: Գլխավոր սնուցման մալուխները ավարտվում են «Siemens», «Legrand» կամ «Schneider Electric» ընկերությունների կողմից արտադրված ցածր լարման (LV) գլխավոր էլեկտրական վահանակներում՝ ջերմամագնիսական անջատման մեխանիզմով ձուլված պատյանով անջատիչներով: Գլխավոր վահանակները ամրացված են պատին և սպասարկվում են միայն առջևից: Ցածր լարման գլխավոր էլեկտրական վահանակները տեղակայված են տրանսֆորմատորային կայանի ցածր լարման վահանակների սենյակում: Ցածր լարման մալուխների հիմնական մալուխատարները ներկայացված են հատակազծերում: Մալուխների կտրվածքները, տիպերը և քանակը կներկայացվեն աշխատանքային նախագծման փուլում: Սնուցող մալուխները և բաշխիչ ցանցերը իրականացվում են պղնձե հաղորդալարերի միջոցով, որոնք պարփակված են ՊՎՔ խողովակի մեջ և ամրակով ամրեցված: Նախագիծը նախատեսում է օդափոխության համակարգերի կենտրոնացված անջատում հրդեհի դեպքում: Ավտոմատ անջատման ազդանշանը տրամադրվում է Հակահրդեհային համակարգի կողմից՝ գլխավոր հրդեհային ազդանշանային վահանակից:

Հիմնական էլեկտրաէներգիայի սպառողներն են՝

- էլեկտրական լուսավորություն (ներքին և արտաքին),
- Վթարային և տարհանման լուսավորություն,
- Հակահրդեհային ազդանշանային համակարգ,
- Ներխուժման ազդանշանային համակարգ,
- Տեսահսկման համակարգ (CCTV),
- Հեռահաղորդակցության համակարգ,
- Համալիրի ժամանակավոր կառույցների (Լիազումար նիստերի համար նախատեսվող երկու խոշորածավալ վրանների) III կարգի էլեկտրասնուցման էլեկտրական սարքավորումներ,
- Համալիրի անցակետի և գրանցման կետի վրանների III կարգի էլեկտրասնուցման էլեկտրական սարքավորումներ,
- HVAC համակարգ,



Ներքին և արտաքին լուսավորություն

Լուսավորության համակարգերն ու սարքավորումները պետք է լինեն LED տիպի և պետք է համապատասխանեն ANNEX A COP 17 և ՀՀՇՆ 22-03-2017 «Արհեստական և Բնական Լուսավորություն» դրույթներին և կանոնակարգային պահանջներին:

Վթարային լուսավորության:

LED լուսարձակ, որը նաև աշխատում է վթարային ռեժիմով, հագեցած է լուսավորության սարքի համար նախատեսված վթարային դրայվերով և մարտկոցային սնուցման բլոկով:

Լուսավորության կառավարում:

Կառավարումը կատարվում է ձեռքով անջատիչների միջոցով:

Հողանցման համակարգ:

Համալիրի հողանցումը իրականացվում է առանձին տեղակայված հիմնական օջախից՝ ROD MAT համակարգից, որի դիմադրությունը չպետք է գերազանցի 4 Օհմից: Հեռահաղորդակցության համակարգի հիմնական հողանցման հաղորդաթիթեղը պետք է միացված լինի անմիջապես՝ առանձին հաղորդալարով՝ սերվերի սենյակից դեպի հիմնական հողանցման ROD MAT համակարգը:

- 1- Հողանցման համակարգի պղնձե ժապավենները, հաղորդիչները, ամրակները պետք է լինեն պղնձից, իսկ հողանցման ձողը պետք է լինի տաք ցինկապատ պողպատից (St/tZn):
- 2- Բոլոր թաղված հողանցման միացումները պետք է կատարվեն ջերմային եռակցման միջոցով և պատված լինեն բիտումաստիկով կամ ջրակայուն մաստիկով-ժապավենով:
- 3- Թաղված հողանցման հորիզոնական հաղորդիչները պետք է լինեն վերին շերտից առնվազն 500 մմ ներքև:
- 4- Բոլոր հողանցման հաղորդիչներում պետք է խուսափել կտրուկ ծռումներից:
- 5- Հողանցման միացում կատարելուց առաջ պողպատե մակերեսը պետք է մանրակրկիտ մաքրվի: Ավարտից հետո միացումը պետք է պատվի բիտումաստիկով:
- 6- Յուրաքանչյուր էլեկտրոդ պետք է մղվի այնպիսի խորության վրա, որ այն թափանցի մայր հողի մեջ առնվազն 1.5 մետրով:

Առաջարկվող համակարգը պետք է հիմնված լինի ՀՀՇՆ II-7.01-2011, CO 153-34.21.122-2003, BS 6651 ստանդարտների վրա:

Շանթապաշտպանության համակարգ:

Համալիրը, նորմերին համապատասխան, պետք է ունենա III կարգի Շանթապաշտպանության համակարգ, որը կապահովի սարքավորումների անխափան աշխատանքը: Շանթապաշտպանման համակարգի օդային տերմինալները, հաղորդիչները և հողանցման ձողերը պետք է լինեն տաք ցինկապատ պողպատից (St/tZn), իսկ միացման ամրակները չժանգոտվող պողպատից: Առաջարկվող համակարգը պետք է հիմնված լինի ՀՀՇՆ II-7.01-2011, CO 153-34.21.122-2003, BS 6651 ստանդարտների հիման վրա:

Արտաքին ձևավորում

Վրանների արտաքին տեսքի ապահովումը նախատեսվում է իրականացնել այլումինե կարկասների հիմքի վրա՝ օգտագործելով էկո և վերամշակման ենթակա նյութեր:

Որակի տեխնիկական հսկողություն

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել բազմաստիճան տեխնիկական հսկողություն՝ ապահովելու բոլոր աշխատանքների համապատասխանությունը սահմանված որակի և միջազգային չափանիշներին: Հսկողության գործընթացը կիրականացվի ղեկավարի կողմից, որի ենթակայության ներքո կգործի մասնագիտական թիմ: Թիմի հիմնական գործառույթը կլինի բոլոր ժամանակավոր և հիմնական կառույցների աշխատանքների համաժամեցումը (սինխրոնիզացիա), ինչպես նաև աշխատանքային փաստաթղթերի (ծավալաթերթերի) համակարգումը, ամփոփումն ու վերջնական ձևակերպումը:

Նախագծի տեխնիկական հիմքը կձևավորվի ինժեներ-նախագծողի կողմից, որը պատասխանատու կլինի նախագծային լուծումների մշակման և ընդհանուր տեխնիկական համակարգման համար: Միաժամանակ, ծրագրում ներգրավված կլինեն 1-3 ինժեներ-վերահսկողներ (սուպերվայզերներ), որոնց պարտականությունները կներառեն՝

- կապալառուներից, ծառայություններ մատուցող կազմակերպություններից և ներգրավված այլ կողմերից տեղեկատվության հավաքագրումը,



- աշխատանքների ընթացքի մշտադիտարկումը,
- տվյալների ամփոփումը և փոխանցումը վերադաս կառույցներին:

Ամբողջ հաղորդակցությունն ու հաշվետվությունները կիրականացվեն անգլերեն լեզվով՝ ապահովելով միջազգային գործընկերների հետ արդյունավետ և թափանցիկ փոխգործակցություն:

Ֆինանսական գնահատական

Ժամանակավոր ենթակառուցվածքների, տեխնիկապես հագեցած վրանային համալիրների և հարակից ինժեներական ու գործառնական համակարգերի նախագծման, կառուցման, տեղադրման և լիարժեք շահագործման ապահովման աշխատանքների իրականացման ընդհանուր բյուջեն կազմում է մինչև 2,182,797,750 ՀՀ դրամ (ներառյալ հարկերը, տուրքերը և օրենքով սահմանված պարտադիր այլ վճարները):

Հավելված №3
 « 23 » « 06 » 2026թ. կնքված
 համաձայնագիր №1
 « 23 » « փետրվարի » 2026թ. կնքված
 «№ ՇԱՆ-COP17-26/01» պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Շրջակա միջավայրի նախարարության
 գլխավոր քարտուղարի պ/կ

Ա. Խանգադրյան

(Ստորագրություն)

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Դուպինգ Սիեյա» ՍՊԸ-ի
 տնօրեն

Հ. Մինոնյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ՆԱԽԱՀԱՇԻՎ

**«COP17 համաժողովի անցկացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների պատրաստվածության ապահովում»
 ծառայությունների մատուցման (ձեռքբերման)**

Անվանում	Մանրամասներ	Նկարագիր	Քանակ	Չափման միավոր	Օրերի քանակ	Գումար (դրամ)	Ընդհանուր գումար (ՀՀ դրամ)
Տնտեսի վարձակալություն (Evolution 2)		30 x 70 x 10 մ	1		90	189,000,000	890,100,000
		35 x 65 x 10 մ	1		90	198,000,000	
		20 x 20 x 6 մ	1		90	66,150,000	
		20 x 30 x 6մ	1		90	76,050,000	
Մոնիտաժում (4 տնետերի)			4			135,000,000	
		Ապամոնիտաժում (4 տնետերի)	4			112,500,000	
		Աշխատակազմի ճանապարհաձախ	35		2	18,900,000	
		Աշխատակազմի հյուրանոց, սնունդ, տրանսպորտ	30		50	94,500,000	
Օրափոխության կազմակերպում	Օրափոխության հասակարգի (հովացում և ջերուցում) վարձակալություն, մոնիտաժում և ապամոնիտաժում	30 x 70 x 10 մ	8			84,780,000	233,145,000



	Օդափոխության համակարգի (հովացում և ջեռուցում) վարձակալություն, մոնտաժում և ապամոնտաժում	35 x 65 x 10 մ	8			84,780,000	
	Օդափոխության համակարգի (հովացում և ջեռուցում) վարձակալություն, մոնտաժում և ապամոնտաժում	20 x 20 x 6 մ	3			31,792,500	
	Օդափոխության համակարգի (հովացում և ջեռուցում) վարձակալություն, մոնտաժում և ապամոնտաժում	20 x 30 x 6մ	3			31,792,500	
Տեխնիկա և բանվորական ներուժ կազմակերպում և ներգրավում							127,500,000
	Տեխնիկա 4 տնետերի մոնտաժման համար	30 x 70 x 10; 35 x 65 x 10Մ, 20x 20x6, 20 x 30 x 6մ			40	52,000,000	
	Տեխնիկա 4 տնետերի ապամոնտաժման համար	31 x 70 x 10; 35 x 65 x 10Մ, 20x 20x6, 20 x 30 x 6մ			32	41,600,000	
	Բանվորական ուժ 4 տնետերի մոնտաժման համար	32 x 70 x 10; 35 x 65 x 10Մ, 20x 20x6, 20 x 30 x 6մ				18,200,000	
	Բանվորական ուժ 4 տնետերի ապամոնտաժման համար	33 x 70 x 10; 35 x 65 x 10Մ, 20x 20x6, 20 x 30 x 6մ				15,700,000	
Ճայնամնկուսացման ապահովում							234,900,000
	Տնետի առատատարի ձայնամնկուսացում բարձրորակ նյութերով	30 x 70 x 10 մ	1		-	114,700,000	
	Տնետի առատատարի ձայնամնկուսացում բարձրորակ նյութերով	35 x 65 x 10 մ	1		-	120,200,000	
Առատատարի և պատերի կտորապատման ապահովում							74,160,000
	Տնետի առատատարի և պատերի կտորապատում	30 x 70 x 10 մ	1		-	24,030,000	
	Տնետի առատատարի և պատերի կտորապատում	35 x 65 x 10 մ	1		-	25,560,000	
	Տնետի առատատարի և պատերի կտորապատում	20 x 20 x 6 մ	1		-	10,125,000	
	Տնետի առատատարի և պատերի կտորապատում	20 x 30 x 6մ	1		-	14,445,000	
Հուսանքների անցկացման աշխատանքների, լուսավորության ապահովում							114,000,000
	Տնետերում լուսավորության ապահովում, հուսանքների անցկացում	30 x 70 x 10 մ	1		-	41,000,000	
	Տնետերում լուսավորության ապահովում, հուսանքների անցկացում	35 x 65 x 10 մ	1		-	44,000,000	



Հավահորեհային համակարգ, գույք, տվիչներ	Տնտեսորոն լուսավորության ապահովում, հոսանքների անցկացում	20 x 20 x 6 մ	1	-	14,000,000	
	Տնտեսորոն լուսավորության ապահովում, հոսանքների անցկացում	20 x 30 x 6մ	1	-	15,000,000	
	Տնտեսի հավահորեհային համակարգի, տվիչների ու գույքի ապահովում	30 x 70 x 10 մ		-	22,500,000	
	Տնտեսի հավահորեհային համակարգի, տվիչների ու գույքի ապահովում	35 x 65 x 10 մ		-	23,800,000	
	Տնտեսի հավահորեհային համակարգի, տվիչների ու գույքի ապահովում	20 x 20 x 6 մ		-	9,600,000	
	Տնտեսի հավահորեհային համակարգի, տվիչների ու գույքի ապահովում	20 x 30 x 6մ		-	10,600,000	
						66,500,000
	Կավրային					45,150,000
	Տնտեսի հատակի ծածկում ռետինե հիմքով կավրայինով (աշխատանք, նյութեր, կավրային)	30 x 70 x 10 մ	2100	թ/մ	17640000	
	Տնտեսի հատակի ծածկում ռետինե հիմքով կավրայինով (աշխատանք, նյութեր, կավրային)	35 x 65 x 10 մ	2275	թ/մ	19110000	
Տնտեսի հատակի ծածկում ռետինե հիմքով կավրայինով (աշխատանք, նյութեր, կավրային)	20 x 20 x 6 մ	400	թ/մ	3360000		
Տնտեսի հատակի ծածկում ռետինե հիմքով կավրայինով (աշխատանք, նյութեր, կավրային)	20 x 30 x 6մ	600	թ/մ	5040000		
Քրեմափոխարման ապահովում	4 տնտեսների բեռնափոխարում 12 մետրանոց թրեյլերներով)	Կեսսել - Երևան	32	հատ	108,000,000	249,750,000
	4 տնտեսների բեռնափոխարում 12 մետրանոց թրեյլերներով)	Երևան - Կեսսել	2	հատ	6,750,000	
	4 տնտեսների բեռնափոխարում 12 մետրանոց թրեյլերներով)	Կեսսել - Երևան	2	հատ	6,750,000	
	4 տնտեսների բեռնափոխարում 12 մետրանոց թրեյլերներով)	Երևան - Կեսսել	32	հատ	108,000,000	
	Օդափոխության համակարգերի բեռնափոխարում 12 մետրանոց թրեյլերներով	Մյունխեն - Երևան	3	հատ	10,125,000	
	Օդափոխության համակարգերի բեռնափոխարում 12 մետրանոց թրեյլերներով	Երևան - Մյունխեն	3	հատ	10,125,000	
						11,200,000
	4 տնտեսների նախագծում և մոդելավորում, կրող կրնատուրովցիաների բեռի բաշխվածության հաշվում		1	-	11,200,000	



Ապահովագրություն		Ապրանքների ապահովագրություն բնական արվեստներից	1		5,950,000
<p>Տննտային ենթակառուցվածքների ներգրավման, տեղափոխման, տեղադրման, շահագործման և հետադարձ արտահանման ամբողջական ծրագրի կառավարում և համակարգում</p>	1	Տննտային կառույցների արտադրումների և մատակարարների ընտրության, տեխնիկական և առևտրային պայմանների համաձայնեցման, արտադրական հարթակներ և պահեստային տարածքներ տեղում այցելությունների կազմակերպման, արտադրական կարողությունների և որակի համապատասխանության գնահատման, ինչպես նաև տննտային կառույցների տեխնիկական լուծումների վերջնական ընտրության իրականացում: Տննտային կառույցների տեղափոխման, ներմուծման և տեղադրման գործընթացների կազմակերպում և համակարգում, ներառյալ բեռնափոխադրումների պլանավորում, մաքսային և սահմանային ընթացակարգերի ուղեկցում, տեղանքի տեխնիկական ուսումնասիրությունների կազմակերպում, անհրաժեշտ թույլտվությունների և համաձայնեցումների ստացման ապահովում, ինչպես նաև մոնիտինգի, գործարկման և տեխնիկական հանձնման գործընթացների վերահսկում	1	20,000,000	20,000,000
Պահեստավորում		Տննտերի, հարակից պարագաների պահեստավորում նախքան մոնտաժում	1		6,500,000.00
Չնախատեսված ծախս (5%)		Դատարկ արկերի և գույքի պահեստավորում մինչև ապամոնտաժում	1		2,000,000
Ընդամենը տննտեր					103,942,750.00
					2,182,797,750

